ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 18 >> օգոստոսի 2012թ. N 319

ք. Արմավիր

ԺԱՆՆԱ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ, ԱԼՅՈՆԱ ՍՈՒՐԵՆԻ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ, ԴԱՎԻԹ ՍՈՒՐԵՆԻ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ, ԿԱՐԻՆԵ ՍՈՒՐԵՆԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ԵՎ ԼԻԴԱ ՍՈՒՐԻԿԻ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի քաղաքապետի 2012 թվականի օգոստոսի 7-ի N184-Ա որոշումը, Ժաննա Միրզոյանի և Մեծամորի քաղաքապետարանի <<Մեծամորի բարեկարգում>> ՀՈԱԿ-ի միջև 2012 թվականի օգոստոսի 7-ին կնքված բնակարանի վարձակալության մասին պայմանագիրը և Ժաննա Միրզոյանի 2012 թվականի օգոստոսի 16-ի դիմումը.

որոշում եմ՝

1. Ժաննա Միրզոյանին, Ալյոնա Սուրենի Ավանեսյանին, Դավիթ Սուրենի Ավանեսյանին, Կարինե Սուրենի Այվազյանին և Լիդա Սուրիկի Ավանեսյանին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի քաղաքապետի 2012 թվականի օգոստոսի 7-ի N184-Ա որոշմամբ վարձակալական հիմունքներով հատկացված Մեծամոր քաղաքի թիվ 24 շենքի թիվ 302 երեքսենյականոց բնակարանը՝ 75.3 քմ ընդհանուր մակերեսով, 44.1 քմ բնակելի մակերեսով անհատույց մասնավորեցնել՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ